ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետ Տաթևիկ Խաչատրյանի Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ. Տաթևիկ Խաչատրյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնը. ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետ:

Գործուղման վայրը և ժամկետները. Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ), 2024թ. սեպտեմբերի 16-ից 20-ը:

Հրավիրող կողմը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանց (OECD ACN):

Գործուղման նպատակը. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հակակոռուպցիոն ցանցի լիագումար նիստին մասնակցություն, որի ընթացքում տեղի են ունեցել նաև Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների 23-րդ մոնիթորինգի հանդիպումը և Հակակոռուպցիոն ցանցի Ղեկավար խմբի 29-րդ հանդիպումը:

Քննարկված թեմաները. Հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտում տարածաշրջանային երկխոսություն, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոնղոլիայի, Տաջիկստանի և Ուզբեկստանի 5-րդ գնահատման փուլի զեկույցների քննարկում և հաստատում և Ղեկավար խմբի 2025 թ. աշխատանքային պլանի հաստատում:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետը հանդիպմանը ներկայացրել է Հայաստանում իրականացված լայնածավալ հակակոռուպցիոն բարեփոխումները: Արդարադատության նախարարության

ներկայացուցիչը անդրադարձել է միջազգային մոնիթորինգային մեխանիզմների կարևորությանը և վերահաստատել Հայաստանի հանձնառությունը պատշաճ իրականացնել ստանձնած միջազգային պարտավորությունները:

ՀՀ արդարադատության նախարարության
Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի
վարչության մոնիթորինգի բաժնի պետ

Տաթևիկ Խաչատրյան

25.09.2024թ.